Լևոն Ե. Լաճիկյան

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԳՈՒ ԵՎ ԿՏԱՎԻ ԳՈՒՅՆԵՐԻՑ

Նոյեմբերի 9-19-ը Հայաստանի Նկարիչների տանը կազմակերպվեց գեղանկարիչ Վիլիկ Զաքարյանի հոբելյանական՝ թվով 10-րդ անհատական ցուցահանդեսը:

Վիլիկ Զաքարյանն արդի հայ կերպարվեստի այն ներկայացուցիչներից է, ովքեր տասնամյակներով ստեղծել են իրենց ոճը՝ որպես արդյունք շրջապատող աշխարհի հետ հարաբերվելու իրենց կերպի և գեղարվեստական ինքնօրինակ մտածողության: Հատկանշական է այն ներքին խաղաղությունը, որ կա Վիլիկի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Ինչ էլ պատկերի նա՝ բնության թե մարդկային առօրյայի որևէ տեսարան, պայքարի դրվագ թե հանդարտ զրույցի պահ, հեղինակը ամենուրեք, նույնիսկ առաջին հայացքից քառսային թվացող իրավիճակներում ներդաշնակություն է որոնում և

Ժամանակը 2008թ. (կտավ, յուղ.)

տեսնում: Դա նրանից է, որ այդ ներդաշնակությունը կա իր հոգում, իր ներաշխարհում:

Բազմաթեմա ու բազմաժանր է Վիլիկ Զաքարյանի ստեղծագործությունը: Նկարչին հետաքրքրում են առասպելական-դիցաբանական սյուժեներից մինչև մեր օրերի հրատապ թեմաները: Դրանք հաճախ արտահայտվում են նկարաշարերով, որոնց մաս կազմող նկարները միավորվում են ոչ միայն արտաքին չափսերով ու կոմպոզիցիոն կառուցվածքի նմանությամբ, այլև նույն թեմայի շարունակական արծարծումներով ու մեկնաբանություններով: Անշուշտ, ասելիքի առատությունը, ինչպես նաև բազում խնդիրների առաջադրումն են ծնում նման շարքեր՝ դրանց լուծումների որոնումը «բաշխելով» նկարից նկար: Այդ հանգամանքն է թերևս պայմանավորել նաև Վիլիկի նկարներին բնորոշ բազմապլանայնությունը: Կտավի նույն մակերեսին տարբեր հարթություններով ընթացող ու ծավալվող գործողություններ են՝ կապակցված միևնույն թեմայով: Գրաֆիկական շատ կոմպոզիցիաներում, նաև գեղանկարներում կարելի է պատկերված տեսնել հեղինակի մտքի ընթացքը, որը դիպաշարի տեսքով տողանցում է նայողի հայացքի առջևով:

Դիտում ես Վիլիկի վրձնած կտավները և համոզվում, որ կոմպոզիցիայի ակնհայտ վարպետ է նա: Գրավում է ծավալների ռիթմը, լուսային խաղը, սովորական ներկի՝ գեղանկարչական գույն դառնալու մոգական ընթացքը: Հատկապես տպավորում են գծի ու գույնի փոխներթափանցման հետաքրքիր զուգորդումները, դրանց ձույլ միասնությունը և ընդհանուր կատարման բարձր կուլտուրան: Նրա գիծն իմաստակիր է ու ընդհանրացած: Երբեմն այն ոչ թե նախորդում, այլ հաջորդում է գույնին՝ ասես ծնվելով վերջինից և ազատ ճախրանքով ու քմահաճ պտույտներով պարագծելով նկարի ողջ մակերեսը:

Ընդհանրացումների ձգտող նկարիչը հաճախակի է օգտագործում զանազան խորհրդանիշեր և երկրաչափական մարմինների գծապատկերներ՝ մեխեր, եռանկյունիներ, հատակագծեր, սլաքներ և այլն: Միաժամանակ, համադրելով առաջին հայացքից անհամադրելի թվացող առարկաներ և դիմելով պայմանական այլ միջոցների, նա այլաբանական պատկերներ է վրձնում՝ յուրաքանչյուր առարկայի մեջ խտացնելով որևէ իմաստ: Հետաքրքիրն այն է, որ խախտված համամասնությունները ոչ միայն դիսոնանս չեն առաջացնում, այլև հնչում են ներդաշնակ՝ ստեղծելով ակնահաճո ու առինքնող մի միջավայր, գեղարվեստորեն հագեցած տարածություն: Ընդ որում, վերջինս գրեթե միշտ «ընդմիջվում» է շախմատային տախտակ հիշեցնող քառակուսիների պատկերումներով:

Բանն այն է, որ իմաստուն այդ խաղը նկարչի համար նախևառաջ սևի ու սպիտակի, չարի ու բարու հավերժական պայքարի խորհրդանիշ է: Վերջինս հաճախ է իր շուրջը խմբում Վիլիկի կերպարներին, որոնք միմյանց նման լինելով հանդերձ՝ ամեն անգամ հանդես են գալիս տարբեր միջավայրերում ու տարբեր հանդերձավորմամբ. մերթ զրուցում են, մերթ՝ բազմանշանակ լռում: Վիլիկի կերպավորած հերոսուհիները, որպես կանոն, չունեն հստակ արտահայտված դիմագծեր: Սակայն ունեն արտահայտիչ հայացք, խորը քնարականություն և տրամադրություն հաղորդող ներքին ուժ:

Վիլիկ Զաքարյանը վաղուց ի վեր իրեն հաստատած և իր «աշխարհն» ու ոճը գտած նկարիչ է: Այդուհանդերձ շարունակում է որոնել և գտնել նոր արտահայտչաձևեր ու միջոցներ: Արտասահմանյան ներկանյութերից, օրինակ, տարիներ առաջ նա մշակեց կատարման յուրօրինակ եղանակ, որով ստեղծեց գրաֆիկական դիտարժան թերթեր: Այդ որոնումները նրան բերին-հասցրին նաև ծավալային նկարչության ինքնատիպ դրսևորումների, երբ կտավի մակերեսը շարունակություն է գտնում ստվարաթղթից կամ մեկ այլ նյութից պատրաստված հարակից ծավալներում, կամ էլ մի քանի տարաչափ կտավներից կազմվում է ամբողջական մի նկար:

Վիլիկի նման արվեստագետի համար Աստծո պարգևած յուրաքանչյուր օրը լավագույն առիթ է՝ կերտելու արվեստի նորանոր ստեղծագործություններ: Դրանք մերօրյա բազում դժվարությունների արտացոլանքը լինելով հանդերձ՝ երկրային այս կյանքի անցողիկ ակնթարթները գնահատելու և արժևորելու խորհուրդ են կրում իրենց մեջ: Միաժամանակ՝ կարծես գալիս են հաստատելու այն ճշմարտությունը, թե կյանքը գեղեցիկ ապրելու համար նաև ինքդ պիտի այն գեղեցկացնես: Ինչն էլ, իր ստեղծագործությամբ անում է Վիլիկ Զաքարյանը՝ գեղեցկացնելով ոչ միայն իր, այլև իր արվեստի բազում երկրպագուների կյանքը:

HARMONY OF THE SOUL AND THE CANVA'S COLOURS

Levon E. Lachikian

Սասնա ծուռը 2007թ. (կտավ, յուղ.)